Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան

ավագ դպրոց > ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների

վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Դպրոց–ընտանիք համագործակցության ազդեցությունը կրթության եվ դաստիարակության արդյունավետության գործում*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *ՄԱՐՏՈՒՆԻ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՄՄԻԿ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Սվետիկ Վարդանյան

ԴՊՐՈՑ՝ *<<Լիճքի Հ. Թումանյան մ/դ>>*

Մարտունի-2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ1։Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը որպես ուսուցման գործընթացի արդյունավետության պայման----------4

Գլուխ2։Ծնողների ներգարավվածությունը դպրոցական կյանքին----------9

Եզրակացություններ----------21

Օգտագործված գրականություն ----------22

Ներածություն

Երբ երեխան ծնվում է, նա հայտնվում է իր համար բոլորովին անծանոթ աշխարհում և ժամանակի ընթացքում այլ երեխաների ու մեծահասակների հետ շփվելու արդյունքում տեղի է ունենում նրանց անձի զարգացումն ու ձևավորումը: Մենք՝ մեծահասակներս, նրանց ենք փոխանցում մեր փորձը և տալիս ենք գիտելիքներ մեզ շրջապատող աշխարհի մասին: Պետք է միշտ հիշել, որ մենք յուրաքանչյուր պահի նրանց դաստիարակում ենք մեր պահվածքով, խոսելաձևով:

Հետազոտական աշխատանքի գլխավոր նպատակն է տալ հետևյալ հարցի պատասխանը.

Ինչպե՞ս սերտացնել ընտանիք – դպրոց համագործակցությունը, որ համատեղ աշխատանքը ունենա իր դրական արդյունքը, գտնել փոխգործակցության ուղիներ, եղանակներ և ձևեր:

Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի , երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով:

Մեծահասակների՝ հատկապես ծնողների կերպարները նրանք սկսում են յուրացնել և դրանով իսկ կերտել սեփական անձը: Երեխայի առաջին և անփոխարինելի դաստիարակողները ծնողներն են: Յուրաքանչուր ծնող պետք է գիտակցի երեխա ունենալու պատասխանավությունը և նրա դաստիարակությունը ճշմարիտ ուղով տանելու կարևորությունը: Դաստիարակությունը սնում է երեխայի հոգին, նրա գիտակցությունը, նպաստում է մարդկային որակների ձևավորմանը:

Է. Կանտը ասում էր, որ դաստիարակության մեջ թաքնված է մարդկային բնության կատարելագործումը: Մանկության շրջանը բաց թողնել չի կարելի, պետք է սնուցել մանկական գիտակցությունը լավագույն հատիկներով՝ գեղեցիկի ու մարդկայինի: Երեխային ճիշտ դաստիարակելու համար անհրաժեշտ է նրա լավ ճանաչել: Լավ ճանաչել նշանակում է կարողանալ նկատել երեխայի վարքի յուրաքանչյուր մանրուք, զգալ նրա տրամադրության ամենաչնչին տատանումը: Ցավոք, ոչ բոլոր ծնողներն ունեն մանկավարժական կրթություն, այդ իսկ պատճառով իրենց երեխային դաստիարակում են կամ հիշելով իրենց մանկության տարիներն ու այդ տարիներին իրենց ծնողների դաստիարակչական փորձը, կամ էլ ենթագիտակցաբար, առանց գիտական իմացության: Չթերագնահատելով դաստիարակության գործում ելքեր որոնելու նաև այդ ուղիները՝ կամենում ենք նշել, որ, հաճախ առաջնորդվելով առանց մանկավարժահոգեբանական գիտելիքների, ծնողների տեսադաշտից շատ բան է վրիպում, որը հանգեցնում է այնպիսի հետևանքների, որոնց համար ծնողները դառնորեն ափսոսում են ավելի հասուն տարիքում, երբ այլևս ուշ է որևէ բան փոխել: Մեր երջանկության իմաստն ու նպատակը մեր երեխաների դաստիարակությունն է:

Գլուխ 1:Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը որպես ուսուցման գործընթացի արդյունավետության պայման

Ընտանիքը հասարակության սկզբնական բջիջն է: Երեխայի դաստիարակությունը հարկավոր է սկսել ծնվելուն պես, դեռևս օրորոցում: Ավելի սխալված չենք լինի, եթե նշենք, որ երեխայի դաստիարակությունը պետք է սկսել դեռևս սաղմնային վիճակում: Վ. Հյուգոն ասում էր. “Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ, կազմում նրա անկապտելի մասը”:[1] Հետևապես դաստիարակության մեջ կարևորը նրա ճիշտ սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Ինչպես ասում են՝ ծուռ տնկած ծառը դժվար է ուղղել:Դպրոցում ուսուցիչը սովորեցնում և դաստիարակում է, իսկ հայրն ու մայրը ապրելով երեխայի հետ, հաղորդակից լինելով բազմաթիվ կենսապայմաններում՝ երեխաների վրա ներգործելու ավելի լայն

[1] Բալյան Ա.Ա Մանկավարժական հոգեբանության հարցեր: Երան Լույս 1983թ:

հնարավորություն ունեն:Ընտանեկան դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համերաշխ ընտանիքի առկայությունն է:Ընտանիքում լավ փոխհարաբերությունների, առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են հանգիստ, հավասարակշռված, եռանդուն ու կենսուրախ մարդիկ: Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների հետ: Դա բարդ հարց է, որի լուծման ժամանակ առաջնակարգ նշանակություն է ստանում խստության և քնքշության չափը: Չի կարելի անընդհատ սիրել երեխային, անընդհատ գովասանքի արժանացնել, խրախուսել, կատարել նրա բոլոր պահանջները կան ընդհակառակը, երեխային անընդհատ պարսավանքի ենթարկել, պատժել և այն: Դրանք բոլորը պետք է լինեն չափավորված ու դուրս չգան անհրաժեշտության սահմաններից: Դերժինսկին նշում էր. “Ծնողների սերը կույր չպետք է լինի: Երես տված և փափկասուն երեխաները, որոնց ամեն մի քմահաճույք կատարվում է ծնողների կողմից, մեծանում է այլասերված, թուլամորթ, եսամոլ”:Շատ ծնողներ, քաջ գիտակցելով երեխայի դաստիարակության ժամանակ իրենց դերը, երբեմն մոռանում են ուսուցման ընթացքում անհրաժեշտ դերի մասին, կամ կարծում են, որ երեխայի ուսուցումը պարտավոր է իրականացնել միայն դպրոցը: Իրականում երեխայի հիմնավոր գիտելքների ձեռքբերման նպատակով անհրաժեշտ է պահպանել ընտանիք-դպրոց համաձայնեցված փոխհարաբերությունները: Միայն այդ համագործակցության արդյունքում է հնարավոր կուտակել երեխայի մնացորդային գիտելիքների առավելագույն պաշար: Սիրելի ծնողներ, խնդրում ենք ուշադրությամբ հետևել ստորև թվարկված կանոններին երեխայի ուսուցման և դաստիարակության իրականացման ընթացքում:

1. Հաշվի առնենք երեխայի կարծիքը և հարգենք նրան որպես անհատականություն

2. Հետևենք երեխայի դասապատրատման ընթացքին՝ խրախուսելով նրան յուրաքանչյուր չնչին հաջողության դեպքում

3. Ստեղծենք դասապատրաստման համար հարմարավետ պայմաններ՝ այն հաճելի զբաղմունք դարձնելու նպատակով

4. Պարբերաբար զրուցենք և համոզիչ պատասխանենք երեխայի ցանկացած հարցին

5. Անդրադառնանք երեխայի խնդիրներին և աշխատենք լուծում տալ դրանց

6. Հետևողական լինենք այն հաղորդումներին (մուլտֆիլմեր, հեքիաթներ, մանկական հաղորդումներ, ճանաչողական հաղորդումներ և այլն), որոնք երեխաները դիտում են հնռուստատեսությամբ

7. Ետ պահենք երեխային ավելորդ ագրեսիայից և լարվածությունից, սահմանափակենք համակարգչի մոտ երեխայի անցկացրած ժամանակը

8. Հետևենք բակում երեխայի շփումներին

9. Հետևենք երեխայի գրական խոսքին:

Գաղտնիք չէ, որ շատ ծնողներ իրենց երեխաներին վստահում են հատուկ հաստատությունների՝ դպրոցների, որտեղ երեխաների ուսուցումը իրականացնում են մանկավարժները: Այս նյութում կփորձենք ներկայացնել ընդհանուր դրույթներ, որոնք առնչվում են դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեությանը:

Դպրոցը այն հաստատությունն է, որի գործառույթն երեխայի արդյունավետ ուսուցման և դաստիարակության կազմակերպումն է, ինչպես նաև նրա առօրյան առավել հետաքրքիր դարձնելը: Երեխաների և մեծահասակների հարաբերություններից կարելի է առանձնացնել մի գործունեություն, որը մենք անվանումն ենք ուսուցում: Այս գործունեությունը առանձնանում է երեխային գիտելիքներ հմտություններ փոխանցելու հատուկ եղանակներով:Դպրոցում իրականացվող այս գործունեության մեջ մանկավարժները առանձնացնում են երեք կարևոր հասկացություն՝ խաղ, աշխատանք և բուն ուսումնական գործընթաց:[2]Վերջին ժամանակներում տարածված է դարձել ուսուցում խաղի միջոցով հասկացությունը: Ինչ է այն նշանակում: Մանկավարժները փոձում են երեխայի համար հաճելի զբաղմունքը ծառայեցնել ուսումնադաստիարակչական նպատակներին, խաղը դարձնել արդյունավետ: Երբ երեխան խաղում է նաւ սովորում է, սակայն կարևոր է, թե ինչով է նա խաղում և ինչ պայմաններում: Կան

[2] Էլկոնին Դ Բ Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն Երևան Լույս 1975թ:

խաղեր, որոնք մարզում են երեխայի տրամաբանությունը, ստեղծագործաբար մտածելու ունակությունը, վերլուծական միտքը և այլն (կառուցողական խաղեր, սյուժետադերային խաղեր, շարժախաղեր, հոգեբանական խաղեր և այլն):

Մանկավարժների դերը երեխաներին գրագետ խաղալ սովորեցնելն է (ավելի մանրամասն՝ խաղը երեխայի համար նյութում): Այս ամենը հաշվի առնելով՝ միևնույն ժամանակ պետք է հասկանալ, որ բուն ուսումնական գործընթացը անհրաժեշտ է առանձնացնել խաղից: Հենց դաստիարակման պրակտիկան է տանում ոչ կտրուկ, բայց ուսուցման ու խաղի տարանջատմանը: Ուսուցումը հետաքրքիր կազմակերպելու պարագայում երեխաները հեշտությամբ են թողնում խաղը, նրանց մոտ աստսիճանաբար առաջանում են առավել խորը ճանաչողական պահանջներ, որոնք չեն բավարարվում խաղի ընթացքում: Ուսումական գործընթացում երեխան յուրացնում է գիտելիքներ, հմտություններ, սվորում է լսել, տեսնել, դառնում է ավելի կազմակերպված:Ուսուցումը նաև նրանց մոտ ձևավորում է մեծահասակների արձագանքելու կարողությունննը և ավելի հեշտ է դարձնում մեծահասակների հետ շփումը:

Աշխատանք ասելով հասկանում եք երեխաների կողմից իրականացվող այնպիսի գործունեություն, որն առավել մոտ է իրականությանը և տալիս է կենցաղային հմտություններ: Օրինակ մանկավարժները փորձում են երեխաների հետ կազմակերպել շինարարական աշխատանքներ հենց բնական շինարարական նյութերով, կամ երեխաները կարող են զբաղվել խոհարարությամբ: Աշխատանք է համարվում նաև այն, որ երեխաները հավաքում են թափված խաղալիքները կամ խնամում են դրանք:Մայրիկները կարող են երեխային մասնակից դարձնել խոհանոցային աշխատանքներին, իսկ հայրիկների հետ միասին նրանք կարող են դռան կոտրված փականը նորոգել:

Այսպիսով՝

1. խաղ,

2. աշխատանք,

3. բուն ուսումնական գործընաց:

Յուրաքանչյուր դպրոցի մանկավարժական գործընթացը պետք է հիմնված լինի այս 3 տիպի գործունեության վրա: Դրանցից յուրաքանչյուրը ունի իրեն հատուկ որակներ և այդ պատճառով ոչնչով չփոխարինվող ազդեցություն:Մարդու մեջ հաստատուն է և հուսալի է միայն այն, ինչ նրա բնության մեջ ներծծվել է կյանքի առաջին շրջանում:

Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստություններում: Ընտանեկան դաստիարակության առնչությամբ հանդես եկան 3 հիմնական ուղղություններ.

1. Պեստալոցին գտնում էր, որ մարդկանց ընտանեական հարաբերությունն առավել բնական հարաբերություններն են և դաստիարակությունը նույնպես, սակայն նա չէր ժխտում ուսումնական հաստատությունների դերը:
2. Անգլիացի սոցիալիստ Ռոբերտ Օունն ընտանիքը համարում էր էգոիզմի և երեսպաշտության բույն, բացասական կարծիք ուներ ընտանեական դաստիարակության մասին:Գտնում էր, որ երեխաների դաստիարակությունն իրականացվում է դպրոցի, ընտանիքի, հասարակության համատեղ ջանքերով: Ընտանիքի ազդեցությունն երեխաների զարգացման և ձևավորման վրա ունի անփոխարինելի ուժ, որովհետև յուրաքանչյուր խելամիտ ծնող լավ է ճանաչում իր երեխային: Երեխայի ընտանեկան դաստիարակության համար ամուր հիմքը ծնողների միմյանց հանդեպ սերն է:

Առաջին պայմանը ընտանեկան համախումբն ու ձևավորումն է, պարտքի պատասխանատվության խոր զգացումն է, երեխաների՝ իրար նկատմամբ սիրո, բոլոր հարազատների նկատմամբ հարգանքի բարձր զգացողության և բարձր զգացմունքի ձևավորումն է: Ընտանեկան դաստիարակության երկրորդ պայմանը չափավորությունն է: Երեխային չի կարելի անընդհատ պատժել և երես տալ, բոլոր պահանջները կատարել: Երրորդ կարևոր պայմանը ծնողների սկզբունքայնության կայունությունն է, այս դեպքում սկզբունքայնությունը վերաճում, դառնում է վճռական: Չորրորդ կարևոր պայմանը երեխաների հայրենասիրական հումանիստական, կոլեկտիվիստական, աշխատանքային զգացմունքների ձևավորումն է և դաստիարակումը: Ընտանիքում կարևոր նշանակություն ունի երեխաների բարոյական այնպիսի որակների ձևավորում, ինչպիսին է մանկական հաղորդակցության դերը: Մեծ նշանակություն

ունի ծնողների անձնակի օրինակը, ինչպես նաև նրանց կողմից խելացի վերահսկողության դերը: Մեծ նշանակություն ունի աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակության դերը, որոնք պետք է իրականացնել ըստ տարածքային փուլերի: Ընտանեկան դաստիարակության համակարգում կարևոր է դպրոցականների ուսման բարձր արդյունավետությունն ապահովելու համար ծնողները կատարում են մի շարք պայմաններ: Դպրոցը պետք է հաշվի առնի ընտանիքի կառուցվածքի առանձնահատկությունները: Մեզ մոտ ամենաշատ դերը տրվում է մորը, տատիկին, ժամանակակից ընտանիքի համար բնորոշ է ծնողների կրթական, հասարակական գործունեություն: Ծնողները սկսել են դպրոցից պահանջել ավելին: Ընտանեկան դաստիարակության ակզբնաղբյուրն է ինչ կատարվում է երեխայի դաստիարակություն և նրա անձնավորության ձևավորման գործում: Ուրեմն դպրոցը ընտանիքի օգնականն է և պետք է օգնի ծնողին մասնագիտական կաղմնորոշման գործում: Ըստ օրենսդրության՝ կա հատուկ կետ, որտեղ նշվում է ծնողի և նրա պարտականությունների փոխարինողների իրավունքների, պարտականությունների բնագավառում: Ծնողներն ու ընտանիքի անդամները երեխայի առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են: Ոչ մի հակասություն չի կարող լինել դպրոցի և ընտանիքի միջև, եթե ծնողներն ու դպրոցը հաջողությամբ համագործակցում են, ինչը աշակերտի կրթության վճռորոշ տարրն է: Շատ է քննարկվում ծնողներին ներգրավելու ձևի հարցը: Որոշ մարդկանց կարծիքով ծնողների դերը սահմանափակվում է երեխանրի կարգապահությանը հետևելով և ուսուցիչներին աջակցելով: Մյուսներն այդ դերն ավելի ընդլայնված են ընկալում: Ըստ նրանց ծնողները պետք է կարդան երեխաների համար օգնել տնային աշխատանքները կատարելիս, մասնակցեն ծնող ուսուցիչ կոնֆերանսներին, համադպրոցական ծնողական ժողովներին: Ծնողներն իրենք էլ են ցանկանում ընդգրկվել իրենց երեխաների կրթության գործում: Կրթության գործում ծնողների ներգրավելու հնարավորություններ ստեղծելիս պետք է հարցնել նաև ծնողի կարծիքը:[3]

Գլուխ 2: Ծնողների ներգրաավվածությունը դպրոցական կյանքին

Դրական և արդյունավետ դպրոցական միջավայր ստեղծելու գործում, աջակցաթյան մեկ այլ աղբյուր է դպրոցական կյանքում ծնողների ներգրավումը: Ծնողական համայնքի շատ

[3] Էլոյան Տ Ս Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները: Երևան Լույս 1975թ

ներկայացուցիչներ, ոստիկաններ կամ հրշեջներ քաղաքի կամ երկրի մասշտաբավ վարչական պաշտոնյաներ, հաճախ ցանկանում են դպրոց այցելել, բացատրություններ տալ երևութներին, ներկայացնել իրենց գաղափարներն ու գործունեությունը, պատասխանել հարցերին, խորհուրդներ տալ աշակերտներին ու լսել նրանց մտքերն ու առաջարկներն: Արդյունքում պարզ է դառնում, որ դպրոցական գործունեության մեջ ծնողների ներգրավումը նպաստում է դրական մթնոլորտի ստեղծմանը: Այսօր դպրոցում ծնողի ներգրավման ըադլայնումը կարող է որակյալ տարրական կրթությանը նպաստելու բեռն ու հաճույքը կիսելու հնարավորություն ստեղծել:

Ծնողները երեխաների դաստիարակության և կրթելու գործում դառնում են ուսուցչի գործընկերները: Նրանք իրենց երեխաների համար ունեն նույն նպատակները, ինչ որ ուսուցիչները՝ բոլոր երեխաների համար: Ծնողներն ու դպրոցը միասին են պատասխանտու զարգացման բոլոր ոլորտներում: Կրթության հարցում ծնողների ակտիվ մասնակցությունը ապահովելու համար կարելի է թույլ տալ, որ ծնողները դասավանդեն՝ օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները: Իրենց ծնողներին տեսնելով դպրոցի կյանքում ներգրավված և համագործակցելիս՝ երեխաներն իրենց ավելի կարևոր մարդ են զգում: Ընտանքի և դպրոցի լավ բարեկամական հարաբերություններից շահում են բոլոր երեխաները:Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնհատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում:Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան ննպաստում է նրա զարգացմանը:Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգնքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության ու հանդուրժողականության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչնդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների

ձևավորման պայմաններ ստեղծել:Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևավաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:Դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:Ուսուցիչների և ծնողների փոխներգործության ակտիվ մեթոդները կարող են լինել փորձի փոխանակման համաժողովները, հարց ու պատասխանի երեկոները, բանավեճերը, ուռսուցիչների և մասնագետների(բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն) հետ հանդիպումները:Ուսուցիչն իրականացնում է նպատակասլաց գործունեություն երեխաների և նրանց ծնողների միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորման ուղղությամբ, ստողծում ծնողների նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակման իրավիճակներ: Ծնողների հետ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման, կրթական նպատակների իրականացման և երեխաների կրթության առավել նպաստավոր պայմանների ու կրթական միջավայրի ստեղծման կարևոր նախադրյալն է:Ուսուցիչ-ծնող ճիշտ փոխհարաբերություններն նպաստում են անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և անհատի արժեքային համակարգի ձևավորմանը: Հենց առաջին օրերից ամուր հիմքի վրա պետք է լինի ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը. Իրապես հարգելով և վստահելով ուսուցչին՝ ծնողը երեխայի մեջ հարգանք պիտի սերմանի դպրոցի ու կրթության նկատմամբ:[4]

ՀՀ հասարակական, տեսական և քաղաքական նոր հարաբերությունների պայմաններում հասարակության զարգացումն ընթանում է սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական խոր փափոխություններով ու տեղաշարժերով, որոնք հրամայաբար պահանջում են համակողմանի զարգացած, ինքնուրույն, ստեղծագործ, պետական մտածելակերպ ու գաղափարաքաղաքական ակտիվ դիրքորոշում ունեցող մարդու ձևավորում: Սովորողների գործունեության և փիլիսոփայական մանկավարժական ախտորոշումը և գնահատումը որպես ուսումնական գործընթացի կարևոր բաղադրատարրեր, մանկավարժական գիտության մեջ և պրակտիկայում կարևորվել են բոլոր ժամանակներում: Աշակերտի

[4] Խուդոյան Ա., “Անձի զարգացման ճգնաժամայ ին տարիքները”-Երևան: Զանգակ-97, 2004թ.

գործունեության գնահատումը, ինքնագնահատումը, սեփական էության ուսումնասիրումը առաջնային են դիտել դեռևս հին աշխարհի մանկավարժական մտքի ներկայացուցիչները՝ Սոկրատեսը, Պլատոնը, Պրոթարգոսը: Անձի ինքնագնահատումը դիտարկել են որպես սերնդի արդյունավետ կրթության և դաստիարակության հիմք: Անառարկելի է, որ մարդու կողմից արտաքին աշխարհի գնահատումն իրականացնում է սեփական ներաշխարհի ճանաչման և ինքնագնահատման միջոցով առաջնորդվելով բարու, գեղեցիկի, արդարության և ճշմարտության և այլ բարձրագույն չափանիշների տեսանկյունով: Քրիստոնեության ընդունումից հետո անձի գնահատման և ինքնագնահատման վերացական իդեալ չափանիշը անձնավորվեց Հիսուս Քրիստոսի մարդկային կերպարում, բոլոր իրերը, երևույթները, դրսևորումները գնահատվում, արժևորվում էին՝ համապատասխանեցնելով նրան՝ որպես հիմնական չափանիշի: Վերածննդի դարաշրջանն առավելագույնս իդեալը մերձեցրեց մարդուն: Արժեքային իմաստ ներկայացրեց մարդուն հոգևոր ներաշխարհի զարգացումը, նրա բանականությունը, բարոյականությունը և գեղագիտական ընկալումները: Հատկապես արժևորվեց մարդու մանկությունը, որպես արժեք, որպես կյանքի կարևոր և անձի հետագա կյանքի ձևավորման և կարիքների պահանջմունքների ըստ ամենայնի բավարարվածության ապահովման փուլ: Միաժամանակ, առաջնային դիտվեց ուսումնական գործընթացում երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումն, երեխայի գիտակցական ակտիվության և ինքնուրույնության խթանումը, ուսուցման, մասնավորապես գնահատման գործընթացում (Էրազմ Ռոտերդամցի Միշել Մոնտեն): 19-20-րդ դարերում մարդասիրական մանկավարժության ներկայացուցիչներ Խ. Աբովյանի, Հ. Հինդլյանի, Ղ. Աղայանի Պ. Պ. Բլոնսկու և այլոց աշխատություններում մարդու անձնային որակների գնահատման նկատմամբ նոր մոտեցում ձևավորվեց, որը ենթադրում էր մանկավարժական գործընթացում սովորողների գործունեության մանկավարժական գնահատում դիտարկվեց, որպես անձի համակողմանի ախտորոշում, որպես ամբողջ մանկավարժական գործընթացի կողմնորոշիչ հիմք: Անձը՝ որպես սեփական կենսագործունեության սուբյեկտ, որն ունակ է համագործակցության, երկխոսության, համամարդկային արժեքների պահպանման, փոխանցման և զարգացմանը միտված ազատ և ստեղծագործական գործունեության, հանդես է գալիս որպես ուսացման և դաստիարակության նոր հարացույցի էպիկենտրոն (Ն. Ա. Ալեքսեն, Շ. Ա. Ամոնաշվիլին և այլք): Դրա համար հարկ է ոչ միայն հաշվի առնել յուրաքանչյուր առանձին սովորողի անձնային առանձնահատկությունները,

այլև նրան դարձնել ինքնագնահատման, ինքնիրացման և ինքնակատարելագործման ակտիվ սուբյեկտ: Այս հանգամանքը հատկապես կարևորվում է կրտսեր դպրոցում, քանզի կրտսեր դպրոցական տարիքում է ձևավորվում անձնային որակների պատկառելի համալիրը, այդ տարիքում է մարդու հայացքների, հակումների, աշխարհայացքի, հասարակական դիրքորոշումների ձևավորման ամենաբարենպաստ հատվածը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կյանքի մնացած հատվածում զարգանում են և ամրապնդվում այդ բոլորը: Հատկապես կրտսեր դպրոցական տարիքում է իրականանում երեխայի, որպես ուսումնական գործունեության սուբյեկտիվ կայացման ակտիվ գործընթացը, ձևավորում են երեխաների իմացական հետաքրքրությունների դիրքորոշումը, ըստ ուսման ձեռք բերված նվաճումների ինքնագնահատումը և այլոց գնահանման ունակությունը:Աշակերտի ինքնագնահատումը ճիշտ գնահատման կարևոր մասնիկ է: Այն աշակերտին թույլ է տալիս գնահատելու իր սեփական առաջադիմությունը և ինչպես գործընթացի, այնպես էլ արդյունքի հանդեպ ձևավորել պատասխանատվության զգացում: Իրենց ուսման գարծընթացում երեխաների ներգրավման և ուսումնական աշխատանքի որակն է աճում, երբ նրանք մասնակից են դառնում իրենց սեփական նպատակների սահմանմանը և սեփական առաջադիմության գնահատմանը: Ինչպես գիտենք, գնահատման վերջնական նպատակն է աշակերտներին հնարավորություն տալ, որ իրենք իրենց գնահատեն: Կարծում ենք վեց տարեկան երեխան իր զարգացման ընթացքում ի վիճակի է մտորելու որոշակի բնագավառում իր առաջընթացի մասին: Ուսուցիչը պետք է ուղղորդի այդ մտորումները և հարցերի, քաջալերանքի միջոցով աջակցի դրանց: Ճիշտ գնահատման նպատակը այն է, որ սովորողին հնարավորություն ընձեռնվի դառնալ ինքնուրույն ինքնագնահատման գործընթացում: Աշակերտի մտորումները ճիշտ գնահատման անքակտելի մասն են: Այսօր մշակվում է կրտսեր դպրոցականների գնահատման այլընտրանքային ձևեր, այդ թվում ուսուցիչների կողմից ստեղծվել է օրագիր, որի հիմանական նպատակն է հետևել երեխայի առաջադիմությանը և հստակորեն պարզել, թե արդյոք ուսուցումը կազմակերպվում է անպես, որ ուսումնական ծրագիրը համապատասխանի աշակերտի տարիքային և անհատական առանձնահատկություններին և ապահովի յուրաքանչյուր երեխայի ուսումնական գորցընթացի հաջողությունը: Ծնողները և աշակերտները կարևոր գործընկերներ են գիտելիքների գնահատման գործընթացում: Աշակերտները ավելի

ինքնագնահատող ևն, երբ իրենք են վերահսկում իրենց ուսուցումը: Կարծում եմ օրագիրը ծառայում է իր նպատակին, այսինքն՝ երեխան գիտի ամիսը, ամսաթիվը, դասացուցակը և կարողանում է վերլուծել և ինքնագնահատման միջոցով իր համար բացահայտում անել իր առաջադիմության մասին:

Երեխայի անձի ձևավորման և դաստիարակության գործընթացում նշանակալից և առաջնային դեր է կատարում ընտանիքը, սակայն դպրոց ընդունվելուն պես այս պատասխանատվությունը հավասարապես սկսում են կիսել մանկավարժները, որոնք անց են կացնում երեխայի հետ նրա օրվա մեծ մասը: Համաձայն Ա. Ադլերի, իդեալական դպրոցը պետք է միջնորդի դեր կատարի երեխայի ընտանիքի և կյանքի միջև, պետք է լինի այնպիսի վայր, որտեղ երեխան միայն “գրքային” գիտելիքներ, այլև սովորում է “կյանքի արվեստին”: Դպրոցը պատաախանատու է երեխայի ներդաշնակ զարգացման համար և հասարակական բարդ հարաբերությունների մեջ նրա հարմարման համար: Դպրոցարան դաստիարուկությունը մեծապես նպաստում է մարդու ապագա կյանքի մոդելի ձևավորմանը:

Երեխայի հոգեկան և անձնային զարգացման լիարժեքությունը, դրդապատճառների և պահանջմունքների, հետաքրքրությունների և հակումների, ստեղծագործական մտածողության, սոցիալական ակտիվության, բարոյական ինքնագիտակցության զարգացումը մեծապես կախված է ուսուցչի անձից և նրա արհեստավարժությունից: Ներկայիս կրթական կյանքի պահանջները, երբ առաջ են մղվում անձանձ փոխհարաբերությունների կարևորությունը ի հայտ է գալիս կրթության հումանիզացիայի գործընթացը առավել կարևորում են ուսուցչի անձը: Մանկավարժական հոգեբանության մեջ ընդունված է առանձնացնել ուսումնական գործունեությանը նպաստող և օժանդակող հետևյալ կարևոր հասկացությունները՝ ուսուցչի անձ, գործունությունը և մանկավարժական հաղորդակցումը[5]:

Ուսուցչի անձնային առանձնահատկությունները քննարկելիս առաջնային են դառնում նախ և առաջ այն որակները, որոնք նպաստում են մանկավարժական գործունեության լիարժեք տիրապետմանը: Բնականաբար, ուսուցիչ լինելու համար առաջնային են նրա անձնային որակները, գաղափարային, իմացական և արժեքային ուղղվածությունը, նրա մասնագիտական հիմնային գիտելիքները և հմտությունները:

Ուշադրության են արժանանում մասնավորապես մանկավարժական ընդունակությունները, որոնց մեջ կարելի է առանձնացնել հետևյալը՝

1. ուսումնական նյութի մատչելի դարձնելը,
2. աշակերտի հասկացումը,
3. ստեղծագործականությանը աշխատանքում,
4. կազմակերպչական ձիրքերը,
5. երեխաների հանդեպ ուշադրությունը, հետաքրքրվածությունը,
6. հստնկ, վառ, պատկերավոր, համոզիչ խոսքը,
7. ուսումնական նյութը իրական կյանքի հետ կապելու հմտությունը,
8. պահանջկոտությունը և այլն:

ԱՄՆ-ում իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ “լավ” ուսուցիչ հասկացության մեջ նախնառաջ ընդգծվում են հետևյալ կարևոր գործոնները՝

- ապրումակցում,
- հստակություն, համակարգայնություն,
- ուսումնական նյութի այնպիսի մատուցում, որ խթանում է աշակերտների ստեղծագործական հնարավորությունների զարգացմանը,
- աշակերտների հանդեպ բարեհամբյուր մոտեցում,
- հուզական ստաբիլություն,
- խոսքի զարգացվածության բարձր աստիճան:

Որքան բազմազան կարող են լինել տարբեր հեղինակաների կողմից հետազոտված և առաջարկված ուսուցչի ընդհանուր ընդունակությունը, միանշանակ կարելի է փաստել այն, որ առանցքային է համարվում երեխաների հանդեպ սերը,

կապվածությունը նրանց հետ, նրանց հետ աշխատելու ձգտումը նույնիսկ /կենսական պահանջը/: Այս ամենը դրսևորվում է երեխաների հետ աշխատանքում ուսուցչի խորը բավարարվածությամբ, մանկավարժական շփման, նրբանկատության, անկեղծության և անմիջականության մեջ:

Բացի ընդհանուր ընդունակություններից, յուրաքանչյուր ուսուցիչ պետք է, անշուշտ, տիրապետի մասնավոր ընդունակությունների, որոնք կօժանդակեն կոնկրետ առարկայի դասավանդումը:

Մանկավարժական գործունեության բեթացքում կարևոր դեր է խաղում ուսուցչի սթրեսակայունությունը: Սթրեսի դրսևորումները ուսուցչի աշխատանքում բազմազան են և բազմաբնույթ: Այսպես, առաջին հերթին, ընդգծվում են ուսուցիչների ֆրուստրացիաները, տագնապալիությունը, մոխրացումը: Սթրեսակայունության ձևավորման մեջ առաջնային դեր է խաղում ուսուցչի հանդուրժողականությունը, ինչն առաջին հերթին պայմանավորված է ուսուցչի դրական դիրքորոշումներով և կարծրատիպերի, բացակայությամբ, ինչպես նաև ներքին պատասխանատվության զգացումով: Որքան բարձր են պատասխանատվությունը և հանդուրժողականությունը, այնքան ավելի հաջողակ է ուսուցիչը իր գործունեության ընթացքում: Ուսուցիչը, դրսևորելով նշված անձնային որակներն ու ընդունակությունները, իր գործունեության ընթացքում հանդիպում է մի կարևոր հարցի՝ ինչպիսի պայմաններում երեխայի անձի ձևավորումը կարող է ընթանալ առավել արդյունավետ:

1. Երեխայի անձի ձևավորումը ու դաստիարակությունը ենթադրում են երեխայի հուզական ոլորտի վրա որոշակի ազդեցություն: Այս ազդեցությունը պետք է ներառի երեխայի ողջ անձը, նրա ներքնաշխարհը: Սրան հասնելու համար, ակնհայտ է, որ ուսուցիչը պետք է լավ ճանաչի և հասկանա իր աշակերտներին, հասկանա այն “հողը”, ուր պետք է գցի իր “սերմը”: Դաստիարակության արվեստը կապող օղակ է այն բանի միջև, թե ինչ է ցանկանում ձևավորել ուսուցիչը և ինչն է սուբյեկտիվորեն կարևոր երեխայի համար: Ուսուցիչը կստանա իր սպասված արձագանքը, եթե կարողանա հասնել երեխայի համար հուզականորեն կարևոր և նշանակալից գործոններին: Այս տեսակետից կարևոր է հենվել երեխայի առկա պանտնջունքների վրա, քանի որ դրանք զարգացման աղբյուրներ են: Որքան շատ պահանջմունքներ են բավարարվում, այնքան արդյունավետ է ազդեցությունը: Օրինակ, հմուտ ուսուցիչները գիտեն, թե որքան կարևոր է աշխատանքում հաշվի առնել, հարգել և ընդունել դեռահասների ինքնահաստատման, ինքնուրույնության ձգտումները:

2. Անձի ձևավորման մեկ այլ կարևոր պայման է սովորողների ակտիվությունն ու ինքնուրույնությունը: Եթե աշակերտները ինքնուրույն կարողացան վերլուծել, փաստել, եզրակացություններ անել, ցուցաբերել սեփական վերաբերմունքն ու գնահատականը որևէ հարցին, կարելի է վատահ լինել, որ բարենպաստ հող է ստեղծվել համոզմունքների ձևավորման համար: Հակառակ դեպքում ուսուցիչը կարող է միայն գիտելիքներ տրամադրել, որոնք կապված չեն լինի աշակերտի անձի հետ և չեն կարող կրել հուզական երանգ: Հաջողության հասնելու համար ուսուցիչը պատրաստ է ընդունել երեխայի սեփական ինքնուրույն դատողությունները, գնահատականները, հարգել դրոանք ն միասին վերլուծել:

3. Նշանակլից դեր են խաղում ամրապնդումները, խրախուսանքները, գնահատականները: Երեխայի տեղին խրախուսանքն ու դրական ամրապնդումը ստեղծում են դրական հուզական երանգ, բավարարվածության զգացում են առաջացնում, դրդում կատարելագործման: Մյուս կողմից ուսուցչի խրատանքը, դժգոհությունները բացասական հույզեր և զգացողություններ են առաջացնում, որոնք ստիպում են երեխային զերծ մնալ հետագայում նման վարքաձևից: Սակայն և խրախուսանքը, և պատիժը պետք է կիրառվեն տեղին, ժուամանակին և հմտորեն: Երեխային խրախուսելիս և պատժելիս ոսուցիչը կարող է հետևել մի քանի կանոնների՝

- հրապարակային գովեստը ուժեղացնում է ազդեցությունը, մինչդեռ հրապարակային պարսավանքը ճնշում երեխային: Դժգոհությունները անհրաժեշտ է հայտնել երեխային առանձին:
- արդյունավետ չէ գլոբալ գնահատումը՝ թե դասարանի, թե առանձին աշակերտի: Գլոբալ դրական գնահատականի ժամանակ նվազում են ինքնաքննադատությունը, պահանջկոտությունը: Գլոբալ բացասական գնահատականի դեպքում խարխլվում է սեփական ուժերի հանդեպ հավատը: Այսինքն, երկու դեպքում էլ գնահատականը պետք է լինի մասնակի, որպեսզի հարավորություն ընձեռնվի առաջ շարժվելու, կամ սխալները ուղղելու:
- գնահատականը կարող է լինել ուղիղ /կիրառվում է անունների մատնանշմամբ/ և անուղղակի /առանց անունների մատնանշմամբ/, որն առավել արդյունավետ է բացասական գնահատակ տալու դեպքում:

- ցանկացած ազդեցության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն երեխայի կայուն բնութագրերը, այլև նրա ժամանակավոր հուզական վիճակը: Բնականաբար, կախված իրավիճակից, երեխան նույն ասվածը ընկալում է յուրովի:

Պատահում են այնպիսի դեպքեր, երբ ուսուցչի կողմից հստակ ասված, տեղին և ճիշտ պահանջները երեխայի կողմից դիմադրության են հանդիպում կամ բացասական արձագանք ստանում: ատում: Լ. Սլավինան և Լ. Բուժովիչը ենթադրում են, որ այդպիսի իրավիճակներում մեծահասակների պահանջները ստանում են երեխայի համար անընդունելի իմաստ: Գոյություն ունեն մի քանի կարևոր պատճառներ, անոնք այդպիսի իմաստային պատնեշներ ևն ստեղծում՝

- այն դեպքերն են, երբ իմաստային տարբերակումը պայմանավորված է պահանջի բովանդակությամբ՝ այսինքն, մեծահասակն ու երեխան տարբեր իմաստներ են դնում մեկ պահանջի մեջ: Երեխան չի կարողանում ընդունել մեծահասակի պահանջները, քանի որ այդ կերպ է հասկանում որոշ փաստեր: Օրինակ, մեծահասակը պահանջում է չկռվել, սակայն երեխան շարունակում է դա անել, քանի որ կռիվը դիտարկում է որպես քաջության և արիության ցուցանիշ: Որպեսզի հաղթահարվի այս իմաստային պատնեշը անհրաժեշտ է հասկանալ երեխայի ընկալումները տվյալ պահանջի վերաբերյալ:
- այն դեպքերն են, երբ իմաստային տարբերություններ չկան սակայն պահանջների ներկայացման ձևերը երեխայի կողմից հատուկ կերպ հն ընկալվում, օրինակ, ծաղրանքի տեսքով, կամ կրկնվում են շատ հաճախ, ինչի հետևանքավ կորցնում են իրենց ուժը, կամ դրանց իրականացման համար երեխան չունի համապատասխան ներուժ:
- սրանք այն պատնեշներն են, որոնք առկա են կոնկրետ մարդու հանդեպ: Մի քանի նախորդող ազդեցությունների և հարաբերությունների արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է ուսուցի մի կերպար, որն ունի իր հանդեպ հատուկ վերաբերմունք: Հետևաբար, ուսուցչի ցանկացած խոսք ընկալվում է այդ վերաբերմունքի պրիզմայից ելնելով: Այս պատնեշների ձևավորման հիմքում ընկած են ուսուցչի մի քանի նախորդող գործողությունները՝ նա մշտապես բացասաբար է գնահատել երեխային և նրա գործունեությունը: Անկոտորում պնդում է իր պահանջները: Պահանջների ներկայացման ձևը սխալ է ընտում:

Պատնեշների առաջացման գործընթացում կարևոր դեր է խաղում նաև երեխայի անհատականությունը, նրա հոգեկան վիճակը, տարիքային առանձնահատկությունները, ինչը պետք է անպայման ի նկատի ունենա ուսուցիչը:

Ուսուցչի անձ առանձնահատկությունների քննարկումն ու վերլուծությունը չի կարող լիարժեք լինել առանց մանկավարժական շփման վերլուծության: Շփումը ուսուցչի աշխատանքի հիմքն է: Շփում ասելով՝ կարելի է հասկանալ սուբյեկտների համագործակցություն, որի մեջ կարելի է առանծնացնել երեք բաղադրամաս՝

1. կումունիկատիվ /ինֆորմացիայի փոխանակում/,

2. ինտերակտիվ /գործողությունների փոխանակում, փոխհարաբերվելու ստրատեգիայի ընտրություն/,

3. պերցեպտիվ /ուրիշի ընկալում և հասկացում/

Շփման էությունը կայանում է հասարակական փորձի և մշակույթի ձևերի փոխանցման մեջ: Շփման մեջ մարդը ինքնորոշվում է և ներկայանում՝ բացահայտելով անհատական առանձնահատկությունները: Ուսուցչին անհրաժեշ են նամապատասխան հմություններ, գիտելիքներ, կարողություններ, որոնք հիմք են կազմում մադկանց արդյունավետ հաղորդակցման համար:

Աշակերտի անձի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի ուսուցչի մանկավարժական կառավարման ոճը: Մանկավարժական կառավարման ոճը ընդհանուր ուսումնական գործունության և շփման ընթացքում ուսուցիչ-աշակետ փոխհարաբերությունների կայուն միջոցների ընդհանրությունն է: Աշակերտի վարքի կառավարման համար առավել հաճախ ուսուցիչները կիրառում են համոզմունքները, պահանջները, ներշնչանքը: Առավել հաճախ գրականության մեջ առանձնացնում են մանկավարժական կառավարման ոճի երեք տարբերակներ՝ ավտորիտար, դեմոկրատական և լիբեալ: Բոլոր ոճերը քննարկելիս պետք է հաշվի առնել մի հանգամանք, որ մաքուր ձևով կառավարման ոճերը հազվադեպ են հանդիպում, այս պատճառով առավել նպատակահարմար է խոսել որոշակի ոճի գերակայության մասին:

Ավտորիտար ոճի կիրառելիության ընթացքում ուսուցիչը առավելապես օգտագործում է պահանջներ և ագրեսիվ ներշնչանք: Պահանջներն ուղղված են աշակերտների անցանկալի վարքաձևերի ճնշմանը: Ագրեսիվ ներշնչանքը ընդունում է խրատանքների, զգուշացումների, սպառնալիքների, բարկության, վրդովմունքի ձևեր: Այդ ամենը ուղեկցվում է բարկացած, ծաղրանքով լի նյարդայնացած միմիկայով և ինտոնացիաներով: Այդ ոճը ձևավորում է աշակերտի լիարժեք ենթարկում ուսուցչին, արգելակում վարքի ինքնակարգավորման ընդունակության զարգացումը: Աշակերտները կարող են ունենալ տագնապալիության բարձր մակարդակ, վախ, ագրեսիվություն, վիրավորվածություն և այլ:

Կառավարման ***դեմոկրատական*** ոճը ի հայտ է գալիս, երբ ուսուցիչը օգտագործում է պնդումներ, դրդող պահանջներ և բարիացակամ ներշնչանք: Համոզելով երեխաներին, նա բացատրում է կանոններին ենթարկվելու օգտակարությունը, ձևավորում է նրանց մոտ համոզմունք տվյալ պնդման արժեքի վերաբերյալ: Բարյացկամ ներշնչանքը կրում է վստահելի խրատանքի, խնդրաքի, զգուշացման, հիշեցման, խրախուսանքի, անհանգստության ձև: Այսպիսի ոճի դեպքում երեխաների մոտ ձևավորվում է ինքնակառավարման ձգտում, պատասխանատվության զգացում, ինքնավստահություն, բավարարվածության զգացում, առաջ գնալու ցանկություն: Երեխան իրեն մոտ է զգում ուսուցչի հետ և ընդունում նա դերը:

Կառավարման ***լիբերալ*** ոճի կիրառումն այնքան էլ նպատակահարմար չէ մանկավարժական գործունության ընթացքում, քանի որ հաճախ իրավիճակային է, կախված տրամադրությունից, հոգեվիճակից, իրադրությունից: Աշակերտները չեն կաղողանում հարմարվել տվյալ ուսուցիչներին, քանի որ հաճախ նկատում են կտրուկ տարբերություններ նրանց մետեցումներում: Տվյալ ոճը չի նպաստում աշակերտների մոտ ոչ ուսուցչին ենթարկվելու միտում, ոչ էլ ինքնակառավարման տենդենցներ: Ուսուցչի դիրքորոշումը նեյտրալ է, հետևաբար հաճախ դասարանում ի հայտ նն գալիս առաջնորդներ, որոնք վերցնում են իրենց վրա ուսուցչական դերեր:Դաատիարակության տեսությունն ուսմունք է դաստիարակության երևույթների, փաստերի, դրանց արտաքին ու ներքին կապերի, դաստիարակության սկզբունքների ու մեթոդների, դաստիարակության բովանդակության օրինաչափությունների, դաստիարակության կազմակերպման ձևերի մասին:

Դաստիարակության պրոցեսում աճող սերունդները պետք է յուրացնեն այն, ինչ արդեն կուտակվել է հասարակության կողմից, այսինքն՝ յուրայնեն իրենց զարգացման մակարդակին հասցված գիտելիքները, տիրապետեն որոշակի աշխատանքային կարողությունների, յուրացնեն հասարակության վարքի նորմերն ու փորձը և մշակեն կյանքի մասին հայացքների որոշակի համակարգ:

Դաստիարակությունն ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական-պատմական փորձի փոխանցման պրոցեսն է աշխատանքի նախապտրաստելու նպատակով, որն անհրաժեծտ է հատարակության հետագա զարգացումն ապահովելու համար:

Դաստիարակության տեսությունը ներառում է մի շարք տերմիններ (եզրեր), որոնց իմաստի իմացությունը շատ կարևոր է: Այդ տերմիններից են հասկացությունը, դրույթը, կանցեպցիան, վարկածը, փորձառությունը, վերլուծությունը, սինթեզը և այլն:

Հասկացությունը մտածողության ձևերից է, ինչպես օրինակ, դատողությունը, մտահանգումը: Հասկացությունն արտացոլում է երևույթների, առարկաների էական հատկանիշները:

Մանկավարժության մեջ կարելի է հանդիպել մի քանի նշանակություններով գործածվող <<դաստիարակություն>> հասկացությանը,

- լայն սոցիալական իմաստով, երբ խոսքը վերաբերում է ողջ հասարակական կարգի և մարդուն շրջապատող իրականության՝ մարդու վրա դաստիարակչական ներգործությանը,
- լայն մանկավարժական իմաստով, երբ նկատի է առնվում նպատակաուղղված դաստիարակությունը,
- նեղ մանկավարժական իմաստով, երբ դաստիարակության տակ հասկացվում է հատուկ դաստիարակչական աշխատանքը,
- և առավել նեղ նշանակությամբ, երբ նկատի է առնվում որոշակի դաատիարակչական խդրի լուծումը:

Մարդու դաստիարակությունը մանկավարժական լայն իմաստով նպատակաուղղված պրոցես է:

Եզրակացություն

Համաձայն Ա. Լեոնտևի արդյունավետ մանկավարժական շփումը նպաստում է սովորողների մոտիվացիայի բարձրացմանը, ուսումնական գործունեությանը ստեղծագործական բնույթի հաղորդմանը, երեխայի անձի ձևավորմանը, կրության դրական մթնոլորտի ստեղծմանը, ներխմբային գործընթացների արդյունավետ կառավարմանը, ուսումնական դժվարությունների հաղթահարմանը: Արդյունավետ շփումը օգնում է ուսուցչին և երեխային լիարժեք բացահայտել սեփական ներաշխարհը և դրսևորել այն: Ուսուցիչը արդյունավետ է շփվում երեխաների հետ, եթե՝

- բարիացկամ է և քաջալերող

- թույլ է տալիս աշակերտին ինքնուրույնության դրսևորել, հայտնել սեփական կարծիքը, ազատ արտահայտվել,
- ակտիվ է, հեռաքրքրված, լիովին ընդգրկված ուսումնական գործընթացի մեջ,
- անկեղծ է, չի վախենում ցույց տալ իր թերությունները,
- դինամիկ է և ճկուն շփման մեջ, արագ ըմբռնում է առկա դժվարությունները, մարում կոնֆլիկտենրը,
- հարգալից է, հասկացող, ընդունող աշակերտի անձը, ցուցաբերում է անհատական մուտնցում,
- կարող է դժվարությունը դիտել երեխայի տեսակետից ելնելով, պատրաստ է ռեֆլեքսիայի, աշակերտի մոտ առաջացնում է վստահություն, որ իրեն հասկացել են,
- ակտիվ է, դասարանը պահում է դրական լարվածության մեջ:

Արդյունավետ մանկավարժական շփման համար կարևոր նշանակություն ունի նաև սոցիալական հեռավորությունը, որ բնութագրվում է ուսուցչի և աշակերտի սոցիալական դիրքերի տարբերությամբ, նրանց իրավունքներով և պարտականություններով միմյանց հանդեպ: Այսպիսով, կարելի է նկատել, թե որքան են կարևորվում ուսուցչի անձը և նրա շփման հմտությունները ուսումնական գործընթացում, քանի որ անհրաժեշտ անձնային որակների, մասնագիտակ հմտությունների առկայության, ինչպես նաև արդյունավետ շփման, կառավարման ոճի շնորհիվ կարելի է խթանել երեխայի անձի զարգացումը, իսկ հակառակ դեպքում սահմանափակել այն:

Հետազոտությունները ցույց են տվել , որ դպրոցները, որոնցում ծնողների ընդգրկվածության արդյունավետ ծրագրեր գոյություն ունեն, ստացան բազմաթիվ դրական արդյունքներ, ինչպիսիք են.

- Հաճախության բարելավում;
- Բարձր առաջադիմություն,
- Աշակերտների լավ վարք;
- Ծնողների վստահության բարձրացում դպրոցի ու ուսմոն նկատմամբ:

- Աշակերտներին օգնում ու մոտիվացնում են սովորել այնպիսի միջավայրում, որտեղ ծնողներին.
- Ընդունում են ընկերաբար, հարգում ու գնահատում:
- Համարվում են գործընկեր երեխաներիուսման ու զարգացման գործում:
- Ունեն բազմաթիվ հնարավորություններ ընդգրկվելու դպրոցի գործունեությանը:
- Մշտական շփում ունի դպրոցի անձնակազմի հետ:

Դպրոցը տալիս է օգտակար տեղեկատվություն, ինչը նպաստում է նրանց ընդգրկվածությանը: Ծնողներ արդյունավետ ընդգրկվածության ծրագիրը , որն իրականացնում է դպրոցը, պետք է ընդունի ծնողի դերի կարևորությունը:

Երջանիկ է այն երեխան, ով ապրում է լիարժեք ընտանիքում, ունի լավագույն դաստիարակ կամ ուսուցիչ: Համոզմունքի ձևավորում, որ ընտանիքն արժեք է, այն պետք է կառուցել փոխադարձ հարգանքի և հոգատարության հիման վրա: Ծնողներին հասցնել այն գիտակցությանը, որ ամուր կապ ունենալու համար պետք է և՛ ընտանիքում, և՛ դպրոցում լինեն փոխադարձ սեր, հարգանք, ջերմություն, համատեղ աշխատանք:

Ուսուցիչ, աշակերտ, ծնող համագործակցությունը եղել է, կա և կմնա ուշադրության կենտրոնում, որի ճիշտ կազմակերպման հիմնական պատասխանատվությունը կրում է ուսուցիչը:Այս խնդրի լուծումը ուսուցիչներից պահանջում է լինել գիտակ,անաչառ, ունենալ ճկուն միտք և ընտրել աշխատանքի կազմակերպման ճիշտ մեթոդներ և հնարներ նպատակին հասնելու համար:Որպեսզի նպաստենք կրտսեր դպրոցական երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգեբանական, սոցիալական և գիտական կայուն զարգացմանն ու աճին:

Ծնողներին դարձնենք մանկավարժական գործընթացի ակտիվ մասնակիցներ՝ օգնելով նրանց երեխաների դաստիարակության և կրթության համար պատասխանատվության իրականացման գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալյան Ա.Ա., “Մանկավարժական հոգեբանության հարցեր” -Երևան: Լույս, 1983թ.

2. Էլկոնին Դ.Բ., “Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն” - Երևան: Լույս, 1975թ.

3. Էլոյան Տ. Ս., “Ուսուցիչ և գործունեության հոգեբանական առանձնահատկությունները” - Երևան: Լույս, 1980թ.

4. Խուդոյան Ս., “Անձի զարգացման ճգնաժամային տարիքները”-Երևան: Զանգակ-97, 2004թ.

5. Կրուտեցկի Վ.Ա., “Մանկավարժական հոգեբանության հիմունքները” - Երևան: Լույս, 1976թ.